ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 հոկտեմբերի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

141
(2807)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Ո՞Վ Է ԻՐԱԿԱՆՈՒՄ ՄԻԵՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Հայաստանն ու Արցախը փրկիչների պակաս չունեն, բայց դեռ փրկություն էլ չկա. Արցախը հայաթափված է, Հայաստանի գլխին էլ բազում վտանգներ են կուտակված: Ժամանակ առ ժամանակ հայտնվում են գործիչներ, որոնք հավակնում են նորից փրկել բազմաչարչար մեր ժողովրդին: Ֆեյսբուքյան տիրույթում եւ մի քանի այլ սոցիալական հարթակներում այս տարվա հուլիսի 1-ից սկսել է ակտիվանալ ու գովազդել իր գործունեությունը Միեր Ավետիսյան անունով գործարարը: Նա 1 օրում անգամ 4-5 վիդեո կոնտենտ է հրապարակում՝ սարքովի հարցազրույցների ձեւաչափով, որտեղ խոսում է ազգային հարցերից, փրկության գաղափարներից: «Անմահ Գունդ» միջազգային շարժման գլխավոր համակարգող ներկայացած Միեր Ավետիսյանը մեկ լուսանկարներ է տեղադրում Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկի հետ, մեկ ՌԴ ԱԳՆ Սերգեյ Լավրովի հետ, ՌԴ կառավարության նախկին ղեկավար հարգելի Սերգեյ Ստեպաշինի հետ՝ տպավորություն ստեղծելով, թե մտերիմներ են, եւ հետաքրքիր հերթական զրույցներն է ծավալվում նրանց հետ: Վերջերս էլ Սյունիքում Միեր Ավետիսյանը Ռուսական գրքի տուն է հիմնադրել, ներկայանում էր իբրեւ ռուս-հայկական գործարար խորհրդի վարչության նախագահ: Հոկտեմբերի 5-ին էլ գործարար Միեր Ավետիսյանը բաց ֆորմատով քննարկման է հրավիրել ՀՀ բոլոր գործիչներին, կուսակցականներին՝ առանց նախկին եւ ներկա ղեկավարների: Նա հրավիրում է քննարկման հայկական պետականությունը պահպանելու թեմայով: Իսկ ո՞վ է Միեր Ավետիսյանը: 2011թ. մամուլը գրել է. «ՌԴ «Ռենովա» ընկերության տնօրեն Գեորգի Իոսիֆյանն իր նամակում պատմում է, թե Կճոյանն ու նրա սանիկ՝ «Jose» ռեստորանային համալիրի սեփականատեր Միեր Ավետիսյանն ինչպիսի ֆինանսական սխեմաներ են գծագրել, որպեսզի միլիոններ աշխատեն խաբեության եւ Հայաստանի հեղինակությունը խայտառակելու գնով: Նրանք դա արել են ՀՀ վարչապետ, այն ժամանակ Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանի միջոցով: Հենց նրա ցուցումով է Կճոյանն ուղղակի բանակցությունների մեջ մտել բանկիրների հետ՝ նրանց գործունեության համար պահանջելով տարեկան 1 միլիոն ԱՄՆ դոլար: 2008թ. մայիսի վերջին հունիսի սկզբին Արարատյան թեմի առաջնորդ, եպիսկոպոս Նավասարդ Կճոյանի սանիկը՝ Միեր Ավետիսյանը, հանդիպում է կազմակերպում ղազախական ԲՏԱ բանկի կառավարումն իրականացնողի ներկայացուցիչ Ռոման Սոլոդչենկոյի եւ Նավասարդ Կճոյանի միջեւ, որպեսզի Կճոյանը հաստատի այն տեղեկությունը, համաձայն որի՝ ՀՀ կենտրոնական բանկը, որի ղեկավարն այն ժամանակ Տիգրան Սարգսյանն էր, իբր, պահանջում է ԲՏԱ բանկի հայաստանյան մասնաճյուղից տարեկան 1 մլն դոլար՝ իբրեւ վճար ԿԲ լոյալության դիմաց»: Ու նույն Միեր Ավետիսյանը հիմա խոստանում է ազնիվ ճանապարհով փրկել Հայաստանը: Ինչպե՞ս հավատալ նրա ազնվությանը:

ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի նախկին ղեկավարին փոխկապակցված խոշոր շինարարական «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ի դեմ Արարատի մարզի համայանքապետի կռիվը շարունակվում է: Բանն այն է, որ դատարանը մի քանի անգամ համայնքապետ Ասլան Ավետիսյանի դիմումները հետ է վերադարձրել եւ վարույթ չի ընդունել, սակայն գյուղապետը չի հանձնվել ու կրկին դատարան է դիմել, ինչի արդյունքում դատարանը օրերս որոշել է դիմումը վարույթ ընդունել: Չի բացառվում, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի նախկին ղեկավարը իր նախկին կապերն է օգտագործում դատարանում, եւ ընկերության դեմ հայցերը վարույթ չեն ընդունվում: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ համայնքի ղեկավարները դատարաններ են դիմում՝ ընդդեմ ընկերության: Մասնավորապես, Արարատի մարզի Արարատ համայնքի ղեկավար Ասլան Ավետիսյանը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով, որ դատարանը ստիպի Արարատ համայնքի վարչական տարածքի գյուղ Նոյակերտ բնակավայրում գտնվող հողատարածքի մրցույթն անվավեր ճանաչել, «Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցութային կարգով, 25 տարի ժամկետով, վարձակալության տրամադրելու մասին» 22.04.2019թ. որոշումը վերացնել, որպես հետեւանք՝ «Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին» պայմանագիրը եւ դրա հիման վրա կատարված վարձակալության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչել: Այսինքն՝ ինչ տվել են ընկերությանը, հետ են ուզում: Ի դեպ, հենց 2019 թվականի մայիսի 23-ին կառավարությունը մաքսատուրքից ազատման արտոնություն տվեց մի շարք ընկերությունների: Այդ ընկերությունների ցանկում հատկապես ուշագրավ էր «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն, որը փոխկապակցված է Հատուկ քննչական ծառայության աշխատակազմի ղեկավար Դավիթ Սուքիասյանի հետ: «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն զբաղվում է ավազի եւ խճի արդյունահանմամբ: Ըստ կառավարության հիմնավորման՝ ընկերության կողմից ներմուծվող սարքավորումներն օգտագործվելու են հանքարդյունաբերության մեջ (Կոտայքի մարզ): Նկատենք, որ այս ընկերությունն առաջին անգամ չէ, որ արտոնություն է ստանում գործադիրից: 2018 թ. հունվարի 25-ին «ՄԼ Մայնինգը» ստացել էր 2 մլրդ դրամի կամ 5 մլն դոլարի սարքավորումների ներմուծման մաքսատուրքի արտոնություն: Երկու արտոնություն էլ ստացել է 2017-ին՝ հունիսին եւ օգոստոսին: «Ժողովուրդ» օրաթերթը դատական համակարգից էլ է ահազանգ ստացել, թե ինչ վիճակ է ստեղծել «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն Հակակոռուպցիոն դատարանի ճանապարհին, ու իրավիճակը շարունակում է մնալ նույնը. «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ի մեքենաները տակնուվրա են արել դատարան տանող ճանապարհը:



Հայաստանի եւ Արցախի խնդիրների մասին խոսել չսիրող եւ խոսելուց խուսափող Վահագն Խաչատուրյանը շատ ակտիվ է այլ երկրներին ցավակցելու հարցում: Երեկ էլ նա հերթական անգամ փայլել է եւ որոշել ցավակցել Իսրայելի եւ Պաղեստինի ժողովրդին: Նկատենք, որ նա ո՛չ Արցախի, ո՛չ ՀՀ ժողովրդին չի ցավակցել ողբերգական իրադարձությունների առիթով: Նախագահը Արցախի մասին շատ կցկտուր է խոսում: Օրինակ՝ հոկտեմբերի վեցին նա այդ մասին խոսել է «Ֆրանս 24»-ի հետ հարցազրույցի ժամանակ առկա խնդիրների մասին դիտարկումների ընթացքում: Մի առիթով չէ, որ գրել ենք՝ սեպտեմբերի 19-ից հետո Վահագն Խաչատուրյանը կորել էր ասպարեզից: Նրան անգամ չէր անհանգստացնում Ադրբեջանի կողմից Արցախի վրա հարձակումը, այդքան զոհերը, բռնի տեղահանությունն ու Արցախի գոյության դադարումը: Համենայնդեպս, ՀՀ նախագահի աշխատակազմի կայքում առկա տվյալներն այդ մասին են վկայում: Հիմա էլ հանկարծ Վահագն Խաչատուրյանը որոշել է խոսել Արցախի մասին՝ ցավակցելով, սակայն, նաեւ այլ երկրներին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանը սկսել է առաջիկայում պաշտոններին հրաժեշտ տվող նախարարներին փոխարինող թեկնածուներ փնտրել: Դեռ մեկ ամիս առաջ գրել էինք, որ ավագանու ընտրություններից հետո Նիկոլ Փաշինյանը գործադիրում մաքրումներ է սկսելու. այն նախարարները, որոնք այս ընթացքում անգործություն են ցուցաբերել, հրաժեշտ են տալու իրենց պաշտոններին: «Անգործունյա» նախարարների թվում են ԱՆ նախարար Գրիգոր Մինասյանը, շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը, ՏԿԵ նախարար Գևել Սանոսյանը, ինչպես նաեւ սոցապ նախարար Նարեկ Մկրտչյանը: Իշխանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Նիկոլ Փաշինյանն արդեն այս նախարարներին փոխարինողների փնտրտուք է սկսել: Մեր տեղեկություններով՝ Փաշինյանն, օրինակ, Նարեկ Մկրտչյանին փոխարինող տեսնում է ՔՊ խմբակցության պատգամավոր, ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գեւորգ Պապոյանին: Ընդգծենք, որ դեռ վերջնական որոշում կայացված չէ այս մասով, քննարկումների փուլում են: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Գեւորգ Պապոյանն ասաց, որ իրեն նման առաջարկ չի արվել. «Ինձ հետ նման բան չի քննարկվել, ինձ նման բան չի առաջարկվել, ես ինձ խորհրդարանում շատ լավ եմ զգում եւ այստեղ շատ անելիքներ ունեմ, բայց, բնականաբար, ինչպես որոշի իմ քաղաքական թիմը եւ ղեկավարը»: Մնացածների մասով դեռ հստակեցումներ չկան:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՍԱՆՔ ԱՅՍ ՕՐՎԱՆ

Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանն այն կարծիքին է, որ հայ ժողովուրդը չգնահատեց իր հաղթանակները, չարժեւորեց դրանք, այլ տարիներ շարունակ մսխեց այդ հաղթանակները, ինչն էլ հանգեցրեց Արցախի կորստին: «Կարելի է երկար խոսել, թե ինչպես քայլ առ քայլ մի ամբողջ ժողովուրդ դեգրադացվեց, հոփացավ եւ պաշտպանվելու ունակությունը կորցրեց: Դրա հետեւանքը եղավ այն, որ եկավ մի իշխանություն, որն իր ապիկարությամբ, անկարողությամբ եւ անճարությամբ հասցրեց այս օրվան»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանը:



-Սրբազան, Արցախը, որը տարիներ շարունակ եղել է հայ ժողովրդի անկախության, ազատության, պայքարի խորհրդանիշը, այսօր, ցավոք սրտի, կորսված ու հայաթափված է ամբողջությամբ: Ինչո՞ւ հասանք այս իրավիճակին, որտե՞ղ սխալվեցինք: Ինչո՞ւ չփայփայեցինք մեր հաղթանակը:

-Այնպիսի հարց եք տալիս, որ երկու րոպեի պատասխան չի ակնկալում: Դրա մասին կարելի է հատորներ գրել եւ ժամերով, օրերով խոսել, թե ինչու այդպես եղավ: Մեզ այդ հաղթանակը շնորհվեց այն ժամանակ, երբ մենք ճիշտ վերաբերմունք ունեցանք դեպի մեր ճակատագիրը, առաքելությունն ու մեր Աստված, եւ Աստված շնորհեց մեզ այդ հաղթանակը: Հետո մենք մեզ վերագրեցինք այդ հաղթանակը եւ սկսեցինք մսխել 1994 թվականից ի վեր: Մսխման վերջն էլ սա էր: Կարելի է երկար ու անվերջ խոսել մսխման գործընթացի մասին, թե ինչպես քայլ առ քայլ գնաց դեգրադացման այս հասարակությունը, հոփացավ, շփացավ եւ պաշտպանության կարողունակությունը կորցրեց: Դրա հետեւանքը եղավ այն, որ եկավ մի իշխանություն, որը բնավ ազգային իղձերը, նպատակները չէր արտահայտում եւ իր ապիկարությամբ, անճարությամբ, ուրիշների հրահանգները կատարելու պատրաստակամությամբ հասցրեց այս օրվան:

-Սրբազան, այս ցավալի պարտությունը մենք ունեցանք ազգային ինքնության դիմագծի կորստի պատճառո՞վ, թե՞ ուժերը ճիշտ չգնահատելու:

-Ոչ թե ազգային ինքնության գնահատման կամ չգնահատման, այլ ազգային ինքնության աղավաղման պատճառով: Մենք մեր ազգային ինքությունը տեսանք ոչ թե առաքինությունների մեջ, այլ մոլությունների ու մեղքերի մեջ: Ոչ թե տեսանք մեր ինքնությունը առաքինի մարդ, ազգ լինելու, քրիստոնեական արժեքներին հավատարիմ լինելու եւ տարփողելու մեջ, այլ մեր ազգային ինքնությունը տեսանք նորությունների, փողասիրության, կրքերի, ընչասիրության, ընչաքաղցության եւ նմանատիպ այլ բաներ մեջ: Մենք մեր ինքնությունը սխալ պատկերացրինք, դիմագիծը աղավաղեցինք, ինչի հետեւանքով էլ ի վիճակի չեղանք մեզ պաշտպանելու: Հարցը միայն կորցնելու մեջ չէ, այլ աղավաղելու:

Որովհետեւ թեկուզ նրանք, որոնք խոսում են ազգայինի մասին, նրանք մեր ինքնությունը ճիշտ չեն պատկերացնում: Իրենք պատկերացնում են ուտող-խմող, գիրացող, արաբական երաժշտություն լսող եւ միայն հացով, կեցությամբ ու փողով ապրող մարդու:

Իսկ հայի ազգային ինքությունն այդպիսին չէ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԳԵՆՏԻՆԱՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Արգենտինայի արտաքին գործերի նախարարությունը Հայաստանի դեսպանությանը մարդասիրական օգնություն է առաջարկել Ադրբեջանի հարձակումներից եւ էթնիկ զտումներից հետո բռնի տեղահանված Լեռնային Ղարաբաղի բնակչությանն աջակցելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին տեղեկացնում է Diaro Armenia-ն:

Առաքելությունը ներառում է լոգիստիկայի եւ այլ մասնագետներ, նաեւ որոշակի անհրաժեշտ պարագաներ, դեղամիջոցներ, բժշկական այլ պարագաներ, չոր սնունդ:

Արգենտինայի նախագահ Ալբերտո Ֆերնանդեսն ավելի ուշ՝ հոկտեմբերի 6-ին, ընդունել է Արգենտինայի Հանրապետության հայկական հաստատությունների պատվիրակությանը: Արգենտինայի Հանրապետության հայկական հաստատությունների ղեկավարությունը ողջունել է «Սպիտակ սաղավարտ» առաքելություն Հայաստան ուղարկելու որոշումը ԼՂ-ից բռնի տեղահանված բնակչությանը մարդասիրական օգնություն ցուցաբերելու նպատակով:

Նրանք նաեւ շնորհակալություն են հայտնել Արգենտինայի նախագահին G20-ի գագաթնաժողովում եւ ՄԱԿ-ում արած հայտարարությունների համար եւ զեկուցել հումանիտար իրավիճակի լրջության մասին:

Ալբերտո Ֆերնանդեսն իր հերթին կարեւորել է հակամարտությունը տեսանելի դարձնելու կարեւորությունը: Նա նաեւ խոստացել է կապ հաստատել Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ՝համակարգելու հայ համայնքի խնդրանքները՝ պաշտպանելու Ադրբեջանի կողմից ապօրինաբար գերեվարված ԼՂ ղեկավարությանը եւ կանխելու հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ՈՒ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

«Դիվանագիտությունն ու մաթեմատիկան միշտ չէ, որ համընկնում են, ուստի հիմա չէի խոսի տոկոսների, բաժինների եւ նման բաների մասին»,- ասել է ՌԴ փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինը՝ պատասխանելով մինչեւ 2023 թվականի վերջ Երեւանի եւ Բաքվի միջեւ խաղաղության համաձայնագրի ստորագրման հավանականության մասին հարցին:

«Խաղաղության պայմանագրի նախապատրաստումն ու ստորագրումը հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման «ճանապարհային քարտեզի» կարեւոր մասերից մեկն է, որը մշակել են Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարները: Մենք միշտ եղել եւ պատրաստ ենք օգնել Ադրբեջանին եւ Հայաստանին այս փաստաթուղթը մշակելու փոխադարձ ընդունելի հիմունքներով, որպեսզի այն իսկապես լինի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն, հավասարակշռված, երկարաժամկետ խաղաղ կարգավորում երաշխավորող փաստաթուղթ:

Մենք ելնում ենք խաղաղության պայմանագրում Ղարաբաղի հայ բնակչության հուսալի իրավունքների եւ անվտանգության ապահովման թեման հստակ սահմանելու անհրաժեշտությունից եւ կողմերին ներկայացրել ենք որոշակի պատկերացումներ այս առնչությամբ: Հուսով ենք, որ դրանք պահանջված կլինեն, ինչպես պահանջված կլինի մեր տեսակետը, որ մեզ անհրաժեշտ են մեխանիզմներ՝ աջակցելու ստորագրված խաղաղության պայմանագրի հետագա իրականացմանը՝ այնպիսի մեխանիզմ, որը վնաս չի հասցնի Հայաստանի եւ Ադրբեջանի ինքնիշխանությանը եւ անկախությանը»,- ասել է Գալուզինը RBC-ին տված հարցազրույցում:

ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ՊԱՇՏՈՆՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Բաբկեն Սեդրակյանը, «Երեւանի մետրոպոլիտեն» ՓԲԸ տնօրեն լինելուց բացի, նաեւ ՀՀ-ում Ղրղզստանի պատվավոր հյուպատոսն է:

«Ժողովուրդ» օրաթերթի կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՀՀ-ում Ղրղզստանի պատվավոր հյուպատոսի պաշտոնը ստանձնած Բաբկեն Սեդրակյանը հանդիսանում է մետրոպոլիտենի տնօրեն՝ այդպիսով հանդիսանալով նաեւ քաղաքապետարանի աշխատակից:

Վերջերս բողոքներ են ավելացել՝ կապված Երեւանի մետրոպոլիտեի հետ: Բնակիչները դժգոհում են, որ սպասում են 7-ից 10 րոպե, ժամանակ առ ժամանակ՝ նաեւ ավելի, եւ մինչեւ մետրոն կժամանի, սպասողների թիվը կրկնապատկվում է: Այս ամենի արդյունքում մարդիկ երբեմն ստիպված են լինում բաց թողել գնացքներ, քանի որ շատ հաճախ դռները չեն փակվում: Այս ամենից պարզ է դառնում, որ երկու պաշտոններն էլ բավականին պատասխանատու եւ լուրջ մոտեցում են պահանջում, եւ միաժամանակ հնարավոր չէ անթերի աշխատանք կատարել. բնականաբար աշխատանքներից մեկը պետք է տուժի:

Հավելենք, որ Բաբկեն Սեդրակյանը 2018-ի իշխանափոխությունից հետո, ոստիկանապետ Վալերի Օսիպյանի հրամանով, նշանակվել էր ոստիկանության օպերատիվ փնտրողական վարչության պետ, այսպես ասած՝7-րդ վարչության պետ (որը զբաղվում է գաղտնալսումներով): 2019թ.-ի սեպտեմբերին նա ազատվել էր զբաղեցրած պաշտոնից:

ՔՎՈՐՈՒՄ ԿԼԻՆԻ՞

«Հանրային ձայն» կուսակցությունը դեռ որոշում չունի՝մասնակցելու է արդյոք այսօր կայանալիք քաղաքապետի ընտրության հարցով ավագանու նիստին, թե ոչ:

ArmLur.am-ին այս մասին հայտնեց կուսակցության փոխնախագահ Վահան Ավագյանը: Հիշեցնենք, որ «Ազգային առաջընթաց» կուսակցությունը եւ «Հանրային ձայն»-ը հայտարարել են, որ չեն մասնակցելու նիստին, որպեսզի քվորում չապահովեն, եւ նիստը տապալվի:

Քվորում ապահովելու համար անհրաժեշտ է լինելու ավագանու 33 անդամի ներկայություն: ՔՊ-ն եւ «Հանրապետություն»-ը միասին ունեն 32 մանդատ: Այսպիսով, եթե «Հանրային ձայն»-ից մեկ հոգի էլ ներկա լինի, ապա քվորում կլինի, եւ նիստը կկայանա:

ԳՈՐԾԱՐՔՆԵՐ՝ ՆԱԽՔԱՆ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

«Ռիա Նովոստի»-ի տեղեկություններով՝ ԱՄՆ-ն մշտապես զենք եւ զինամթերք է մատակարարել Իսրայելին, որն էլ օգտագործել է Պաղեստինի դեմ, եւ արդյունքում Պաղեստինը հայտնվում է բլոկադայի մեջ, այնպիսի բլոկադայի, ինչպիսին, օրինակ, Արցախում էր. գծում են սահմաններ, բացում անցակետեր եւ թույլ տալիս, որ այդ անցակետերով անցկացնեն միայն այն, ինչը որ իրենք են ուզում:

Բնականաբար, բլոկադայի պայմաններում Պաղեստինը չուներ ո՛չ զենք, ո՛չ զինտեխնիկա, ո՛չ էլ անգամ լույս, քանի որ Իսրայելը այնպես արեց, որ Պաղեստինը դրանից էլ զրկվի:

Ժամանակին ձեւավորված է լինում «ՀԱՄԱՍ» խմբավորումը: «ՀԱՄԱՍ»-ը համարվել է իբրեւ ահաբեկչական կազմակերպություն ԱՄՆ-ի, Կանադայի, ԵՄ-ի, Իսրայելի եւ Ճապոնիայի կողմից, բայց, ըստ արաբական երկրների, «ՀԱՄԱՍ»-ը համարվում է վրիժառուների խումբ:

Այս խումբը, ի վերջո, տեսնելով, որ բլոկադայի եւ տարբեր ճնշումների ներքո չեն կարող այլեւս դիմակայել, սկսում են արդեն պայքարել, սակայն հարց է առաջանում, թե ինչպես են կարողացել բլոկադայի պայմաններում զինվել, եւ դա Իսրայելը չի նկատել:

Այստեղ արդեն կարող ենք խոսել Իրանի մասին, քանի որ շատերին է հետաքրքրում, թե ինչու էր Իրանը ցնծում, երբ Պաղեստինը հարձակվեց Իսրայելի վրա: Իրանը գրեթե միշտ շատ վատ հարաբերություններ է ունեցել Իսրայելի հետ, ուստի Պաղեստինի զինելու գործը ստանձում է Իրանը: Քանի որ անցակետերով զենք անցկացնելը հնարավոր չի եղել, Իրանը զենք պատրաստելու համար նախատեսված բոլոր գործիքները մաս-մաս ուղարկում է Պաղեստին: Իրանին հաջողվում է զենք եւ հրթիռ արտադրելու համար նախատեսված բոլոր գործիքները ծովով, անցակետերով, թունելներով հասցնել Պաղեստին:

«ՀԱՄԱՍ» կազմակերպության ներկայացուցիչները ծածուկ սկսում են պատրաստել հրթիռներ: Եվ, ահա, տեսնում ենք, թե ծածուկ պայմաններում պատրաստած հրթիռները Պաղեստինը ինչպես օգտագործեց:

«ՀԱՄԱՍ» խմբավորումը պնդում է, որ սա վրեժ է, իրենց հանել են իրենց տներից, պահել բլոկադայի մեջ, եւ այս ամենով վերջ կդրվի ամեն բանի: «Համաս» խմբավորման անդամներն արդեն անցան նաեւ Թել Ավիվը, նրանք վերցնում են գերիներ, պայթացնում ամեն բան, չեն խնայում ոչինչ:

«ՀԱՄԱՍ» -ի բարձրաստիճան զինվորական հրամանատար Մոհամմադ Դեյֆը ասել է. «Սա ամենամեծ ճակատամարտի օրն է՝ վերջ դնելու երկրի վրա վերջին օկուպացիային»:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔ

ՀՌՈՄԻ ՍՏԱՏՈՒՏԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

«Մենք մեր դաշնակից Հայաստանի միացումը Հռոմի ստատուտին համարում ենք բացարձակապես ոչ բարեկամական քայլ». «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է RBC-ին տված Ռուսաստանի փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինի հարցազրույցից:

Նրա խոսքով՝ «բոլորի համար ակնհայտ է, որ ՄՔԴ-ն բառի բուն իմաստով արդարադատության հետ կապ չունի»: «Սա քաղաքականացված արեւմտամետ կառույց է, որը կատարում է Արեւմուտքի չսիրած գործիչների քրեական հետապնդման հրամանները: Այս դատարանը որոշ ժամանակ առաջ կալանքի օրդեր է տվել Ռուսաստանի բարձրագույն ղեկավարության ներկայացուցիչների նկատմամբ: Փակագծերում նշեմ, որ, իհարկե, այդ հրամանները բացարձակապես իրավաբանորեն առոչինչ են: Ռուսաստանի եւ նրա ղեկավարության նկատմամբ ՄՔԴ-ի բացարձակապես քաղաքականացված թշնամական դիրքորոշման ֆոնին մեր դաշնակից Հայաստանը որոշում է վավերացնել այս դատարանի կանոնադրությունը: Ինչպե՞ս պետք է ընկալենք նման քայլը՝ միայն որպես, մեղմ ասած, ոչ բարեկամական»:

Նրա խոսքով՝ Ռուսաստանը հույս ուներ, որ Հայաստանը զերծ կմնա նման քայլից: «ՄՔԴ-ի նույն կանոնները թույլ են տալիս, որ այն երկրների համար, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն ստորագրել Հռոմի ստատուտը, միանգամայն հնարավոր է դիմել այս դատարանի ծառայություններին՝ նույնիսկ առանց Հռոմի ստատուտը վավերացնելու: Այս պարադիգմում ես Հայաստանի առաջարկին լուրջ վերաբերվելու հնարավորություն չեմ տեսնում»,- նշել է դիվանագետը՝ մեկնաբանելով հայկական կողմի՝ այս հարցում երկկողմ համաձայնագիր կնքելու առաջարկը:

«Եվս մեկ անգամ կրկնում եմ՝ մեջբերում եք հայկական կողմի առաջարկը, որ ՄՔԴ-ի բացարձակապես անօրինական, անարդար, քաղաքականացված գործողությունների ֆոնին, որոնք արտահայտված են այսպես կոչված օրդերների արձակման մեջ, մենք փնտրելու ենք ինքներս մեզ՝ ապրիորի անօրինական որոշումներից պաշտպանվելու ուղիներ, որոնք մենք չենք ընդունում: Ահա թե ինչի մասին է խոսքը: Եվ այս համատեքստում բացարձակապես ոչ բարեկամական քայլ ենք համարում մեր դաշնակից Հայաստանի՝ Հռոմի ստատուտին միանալը հիշյալ օրդերի առկայության ֆոնին: «Այստեղ երկխոսության տեղ չեմ տեսնում»,- նշել է նա՝ հավելելով, որ այս հարցով խորհրդակցություններ են եղել Երեւանի հետ:

«Մենք որոշակի առաջարկներ ենք արել: Բայց, ըստ երեւույթին, կամ Երեւանը դեռ մտածում է նրանց մասին, կամ որոշել են չընդունել»,- ասաց նա:

Հիշեցնենք, որ օրեր առաջ Հռոմի ստատուտի վավերացմանն արձագանքել էր նաեւ ԱՄՆ պետքարտուղարությունը:

«ԱՄՆ-ն հարգում է Հայաստանի անկախությունն ու ինքնիշխանությունը: ԱՄՆ-ն Հայաստանի կառավարությանն է թողնում իր օրենսդրական գործընթացները մեկնաբանելու իրավունքը»,-այս մասին ճեպազրույցի ժամանակ հայտարարել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակի տեղակալ Վեդանտ Պատելը՝ պատասխանելով Ազգային ժողովի կողմից Հռոմի ստատուտի վավերացման հարցին:

«Մենք հարգում ենք յուրաքանչյուր երկրի՝ Հռոմի ստատուտին միանալու իրավունքը:

Մենք ոգեշնչված ենք բազմաթիվ երկրներով, այդ թվում՝ Հայաստանով, որ ստանձնել են ցեղասպանության, ռազմական հանցագործությունների եւ մարդկության դեմ հանցագործությունների համար պատասխանատվության, արդարության ապահովման պարտավորություն»,- ասել է նա:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԱՐՄՐՈՒԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնը ներկայացրել է հոկտեմբերի 9-ի դրությամբ կարմրուկով պայմանավորված իրավիճակը Հայաստանում:

Ըստ այդմ՝ ընդհանուր լաբորատոր հաստատված դեպքերի թիվը 457 է, որից 317-ը երեխաներ են, 140-ը՝ մեծահասակ:

1 քաղաքացի հոսպիտալացված է, 288-ը դուրս են գրվել:

ՆԻՍՏ ԿԱՆՑԿԱՑՎԻ

Շուտով կկայանա ԵՄ անդամ երկրների արտգործնախարարների արտահերթ հանդիպումը:

Այս մասին հայտարարել է Եվրամիության արտաքին եւ անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ժոզեպ Բորելը:

«Վաղը ես կհրավիրեմ ԵՄ արտաքին գործերի նախարարների արտակարգ նիստ՝ քննարկելու Իսրայելում եւ տարածաշրջանում տիրող իրավիճակը»,- ասել է նա:

Հիշեցնենք, որ Պաղեստինը լայնածավալ հարձակում է սկսել Իսրայելի դեմ, որի արդյունքում մեծ թվով զոհեր, վիրավորներ եւ գերիներ կան:

ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ

Իսրայելում Հայաստանի դեսպանությունը կոչ է անում այդ երկրում գտնվող ՀՀ քաղաքացիներին ձեռնպահ մնալ Իսրայելի հարավային շրջաններ այցելելուց, իսկ այնտեղ գտնվողներին՝ անհապաղ տեղափոխվել ավելի ապահով շրջաններ:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ դեսպանությունը «Ֆեյսբուք»-ի իր էջի գրառմամբ նաեւ խորհուրդ է տալիս հնարավորության դեպքում մնալ հյուրանոցներում կամ բնակարաններում, որպեսզի օդային տագնապի դեպքում հնարավոր լինի մեկ րոպեի ընթացքում հասնել ապաստարան: «Ապաստարանում պետք է մնալ օդային տագնապի ազդանշանի ավարտից հետո առնվազն 10 րոպե:

Թեժ գիծ՝ 050 6670345 (ուղիղ հեռախոսակապ, WhatsApp, Viber չօգտագործել)»,- նշել է Իսրայելում ՀՀ դեսպանությունը:

Հիշեցնենք, որ Պաղեստինյան «ՀԱՄԱՍ» շարժումը հոկտեմբերի 7-ին կատարել է Իսրայելի վրա վերջին տարիների ամենամեծ հարձակումը: Նրանք Գազայի հատվածից հրթիռներ են արձակել Իսրայելի ուղղությամբ: «ՀԱՄԱՍ»-ի զինյալները Իսրայելի տարածք են ներխուժել պարապլաններով եւ պիկապներով: Իսրայելում ռազմական դրություն է մտցվել եւ մոբիլիզացիա հայտարարվել: Իսրայելի վարչապետ Բենյամին Նեթանյահուն հայտարարել է, որ «ՀԱՄԱՍ»-ը պատերազմ է սկսել Իսրայելի դեմ եւ ամենախիստ պատասխանին կարժանանա:

Կողմերի հայտնած վերջին տվյալներով՝ Իսրայելում զոհվել է ավելի քան 700 մարդ, այդ թվում՝ 44 զինծառայող, 2,2 հազարը՝ վիրավորվել: Պաղեստինի կողմում կա 370 զոհ, 2,2 հազար վիրավոր:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ՏԵՂԱԿԱԼՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԸ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել հետեւյալը.

Գագիկ Հայրապետյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, 2014 թվականի հունիսի 6-ից մինչեւ 2015 թվականի ապրիլի 18-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության պետի, այնուհետ՝ 2015 թվականի մայիսի 26-ից հունիսի 29-ն ընկած ժամանակահատվածում՝ ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալի ժամանակավոր թափուր պաշտոնը, ապա՝ 2015 թվականի հունիսի 29-ից մինչեւ 2016 թվականի ապրիլի 18-ն ընկած ժամանակահատվածում՝ նույն աշխատակազմի ղեկավարի տեղակալի պաշտոնը, 2016 թվականի ապրիլի 18-ից մինչեւ 2016 թվականի հոկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի, իսկ 2016 թվականի հոկտեմբերի 20-ից 2018 թվականի մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածում՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ ֆինանսատնտեսագիտական վարչությանի պետի պաշտոնը զբաղեցրած Լուսինե Մարատի Հովհաննիսյանի հետ 101 անձանց տվյալներով կազմվել եւ ստորագրվել են ձեւական բնույթի կեղծ հրամաններ, ինչպես նաեւ տեխնիկական, նորոգման եւ վերանորոգման աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրեր, որոնք չեն գրանցվել եւ նախարարության համակարգ չեն մուտքագրվել, ինչպես նաեւ որեւէ աշխատանքներ չկատարած եւ իրենց հետ փոխկապակցված շուրջ 126 անձանց տվյալներով կատարել են առանձնապես խոշոր չափերով՝ 239.411.071 ՀՀ դրամ գումարի ելքագրումներ, որոնց արդյունքում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, «Կուտակային կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի դրույթների խախտմամբ չի հաշվարկվել եւ ՀՀ պետական բյուջե չի վճարվել ընդհանուր 26.953.300 ՀՀ դրամ եկամտահարկի գումար եւ դրոշմանիշային վճարներ, ինչպես նաեւ տարբեր ապրանքների ձեռք բերման, կատարված շինարարական աշխատանքների եւ վերանորոգումների, կազմակերպված միջոցառումների, մատակարարումների դիմաց կատարված ծախսերը կազմել է ընդհանուր 174.760.949 ՀՀ դրամ գումար, այսինքն՝ ելքագրված գումարից 64.650.122 դրամ գումար պակաս, որպիսի գործողությունների արդյունքում էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին, որն էլ անզգուշությամբ առաջացրել ծանր հետեւանքներ, այն է՝ պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 91.603.422 ՀՀ դրամի գույքային վնաս:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱ

ՀՀ ԱԱԾ-ն բացահայտել է անօրինական միգրացիայի կազմակերպման հերթական դեպքը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ԱԱԾ-ից հայտնում են, որ Երեւան քաղաքի բնակիչ Ա.Մ-ն եւ «Պրոգրեսիվ նոլիջիս» ՍՊ ընկերության տնօրեն Ռ.Մ-ն, նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, շահադիտական նպատակով, միմյանց գործողություն-ները փոխլրացնելով, 2023 թվականի փետրվար-ապրիլ ամիսների ընթացքում ՀՀ քաղաքացիներ Գ.Ս-ի եւ Ռ.Պ-ի անօրինական միգրացիան, այն է՝ ԱՄՆ վերջիններիս մուտքի եւ գտնվելու թույլտվություն ստանալը կազմակերպելու նպատակով նրանցից յուրաքանչյուրից պահանջել եւ ստացել են 15.000-ական ԱՄՆ դոլար գումար: Այնուհետեւ ԱՄՆ մուտքի եւ գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու համար նախատեսված փաստաթղթերի փաթեթներում ներառել են իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր հավաստող եւ իրավունք վերապահող բովանդակությամբ կեղծ աշխատավայրի եւ աշխատավարձի չափի, ինչպես նաեւ ուսումնական հաստատություն ավարտելու եւ որակավորում ստանալու վերաբերյալ տեղեկանքներ, դիպլոմներ եւ վկայականներ, որոնք հանձնել են վերը նշված անձանց, որոնք իրենց հերթին դրանք ներկայացրել են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրավասու մարմին:

Նախաքննության ընթացքում խուզարկություններ են կատարվել Ռ.Մ-ի, Ա.Մ-ի, ինչպես նաեւ վերջիններիս ծառայություններից օգտվող անձանց բնակության հասցեներում եւ տուրիստական կազմակերպություն հանդիսացող աշխատավայրում, որի արդյունքում հայտնաբերվել եւ վերցվել են կեղծ դիպլոմներ, աշխատավայրի եւ աշխատավարձի չափի, ինչպես նաեւ ուսումնական հաստատություն ավարտելու վերաբերյալ կեղծ տեղեկանքներ, բանկային շարժի վերաբերյալ քաղվածքներ, կնիքներ, համակարգիչներ, բջջային հեռախոսներ, ամուսնության եւ ծննդյան վկայականներ, կնիքված դատարկ հավաստագրեր, պատվոգրեր, անձնագրեր, որոնցում առկա են եղել «Շենգենյան համաձայնության երկրներ» մուտքի արտոնագրեր, տարբեր անձանց վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր եւ հանցագործության կատարման համար նախատեսված այլ իրեր ու առարկաներ:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ քննիչի միջնորդությամբ հսկող դատախազի կողմից որոշումներ են կայացվել հանցավոր խմբի անդամներ Ա.Մ-ի եւ Ռ.Մ-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է, իրականացվում են քննչական անհրաժեշտ գործողություններ եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ դեպքի բոլոր հանգամանքները, հանցավոր խմբում ներգրավված անձանց ամբողջական շրջանակը պարզելու եւ նրանց նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցներ կիրառելու համար:

ԿԱՐԵՎՈՐ

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՐԴԸ ⇨

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Արշակ Վլադիմիրի Մարկոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Գառնիկ Խաչիկի Գանելյանին պատճառել է մարմնական վնասվածք, որն առաջացրել է առողջության կարճատեւ քայքայում:

Այսպես, 2022 թվականի սեպտեմբերի 24-ին՝ ժամը 17:40-ի սահմաններում, «Շտապօգնության» ՓԲՋ-ի 4-րդ ենթակայանում գրանցված կանչի հիման վրա՝ հերթապահ բժշկուհի Հերիքնազ Անտոնյանը, բուժակ Էդուարդ Ջիրաքյանը եւ վարորդ Արշակ Մարկոսյանը շտապօգնության մեքենայով մեկնել են Երեւան քաղաքի Նոր Խարբերդ հողամաս 87 հասցե եւ բուժօգնություն ցուցաբերել Անգելինա Դանիելյանին: Այնուհետեւ Գառնիկ Դանիելյանի եւ բուժանձնակազմի միջեւ հարցի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ Արշակ Մարկոսյանը, շտապօգնության մեքենայի վարորդի նստատեղից վերցնելով դանակ, հարվածներ է հասցրել Գառնիկ Դանիելյանի պարանոցին եւ ձեռքին, որից հետո Արշակ Մարկոսյանը, վագոնտնակի մուտքի մոտից վերցնելով

ապակյա տարրա, հարվածել է Գառնիկ Դանիելյանի գլխին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով՝ աջ բազկի, ձախ թուլակողի շրջանների քերծվածքների, ձախ գագաթային, գագաթունքային, պարանոցի, աջ արմնկահոդի շրջանների կտրված վերքերի ձեւով:

ԽՈՒՍԱՓԵԼ Է ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Ն. Ենգոյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա ՀՀ պաշտպանության նախարարի՝ «Նարեկ Խաչիկի Ենգոյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու մասին» 07.06.2023 թվականի հրամանի հիման վրա՝ ընդգրկվել է 2023 թվականի ամառային զորակոչի միջոցառումներին, ինչից հետո՝ 22.06.2023 թվականին, ներկայացել է ու ենթարկվել է բժշկական հետազոտությունների եւ, համապատասխան բժշկական ակտերի հիման վրա, 11.07.2023 թվականին եւ 20.07.2023 թվականին ԿԲՀ-ի կողմից ճանաչվել է սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար, սակայն հրաժարվել է ստանալ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեկնելու ծանուցագիրը, որպիսի պայմաններում խուսափել է հայտարարված 2023 թվականի ամառային հերթական պարտադիր զինվորական ծառայության զորակոչից:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 6-ից 9-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 125 դեպք, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ՝ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Իջեւան համայնքի հանրակրթական դպրոցների ուսուցիչները «Ժողովուրդ» օրաթերթին բողոքել են, որ իրենք ամեն ամիս իրենց աշխատավարձի մեկ տոկոսը փոխանցում են արհմիության հաշվեհամարին: Այդ հաշվեհամարին բազում միլիոնների դրամներ կան, սակայն կրթության եւ գիտության աշխատողների արհմիությունը տարվա մեջ երկու անգամ միայն՝մարտի 8-ի եւ հոկտեմբերի 5-ի՝ուսուցչի օրվա առթիվ որոշակի գումարներ է փոխանցում հանրակրթական դպրոցներին, մնացած գումարները մնում եւ տնօրինվում են արհմիության կողմից, իրենք չգիտեն, թե ինչպես են ծախսվում այդ միլիոնավոր դրամները: Նրանք ասացին, որ արհմիությունը՝որպես ճյուղային անկախ մարմին, պետք է պաշտպաներ ուսուցիչների իրավունքները, սակայն երբեւէ չի զբաղվել ուսուցիչների իրավունքների, շահերի պաշտպանությամբ. այն գործում է որպես իշխանության կցորդ: Ուսուցիչներն ասացին, որ Իջեւանի տարածաշրջանի կրթության եւ գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների տարածքային միության նախագահ Ջինա Ստեփանյանի աշխատավայրը Տավուշի մարզպետարանի շենքն է, Ջ. Ստեփանյանի որդին Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի, սպորտի վարչության պետ Մերուժան Հարությունյանն է: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին երկու անգամ տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝հարցնելով, թե իրավական ինչ հիմքերով Ջինա Ստեփանյանը Տավուշի մարզպետարանի շենքում աշխատավայր ունի, այնտեղ է նստում: Մարզպետարանից ստացված երկրորդ պատասխանում նշված է. «Կրթության եւ գիտության աշխատողների արհմիության ճյուղային հանրապետական միության նախագահը 2001 թվականին դիմել է ՀՀ Տավուշի մարզպետին՝ Իջեւանի տարածաշրջանի կրթության եւ գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների միությանը ՀՀ Տավուշի մարզպետարանի շենքում մեկ սենյակ հատկացնելու խնդրանքով: ՀՀ Տավուշի մարզպետարանում Իջեւանի տարածաշրջանի կրթության եւ գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների միությանը հատկացվել է մեկ սենյակ, որի վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացվել պետռեգիստր՝ գրանցման նպատակով: Ներկայումս Իջեւանի տարածաշրջանի կրթության եւ գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների միության նախագահ Ջինա Ստեփանյանն առանձին աշխատասենյակ չի զբաղեցնում եւ նստում է ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության աշխատակիցների հետ»: Կրթության եւ գիտության աշխատողների՝ անկախ համարվող արհմիության ղեկավարը, որը Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի հարազատ մայրն է, նստում, աշխատում է մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության աշխատակիցների հետ, եւ նա կարո՞ղ է գործատու-վերադասից՝ մարզպետարանից պաշտպանել ուսուցիչների իրավունքները: Նիկոլ Փաշինյանի ասած՝«կոռուպցիան հո պոզով-պոչով կենդանի չէ՞», կոռուպցիան հենց սա է, որ կա:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ԿԱՊԱՀՈՎՎԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Կառավարության «Հումանիտար կենտրոն»-ում ներկայացվել են վերջին տվյալները Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց վերաբերյալ, ինչպես նաեւ Կառավարության աջակցության ծրագրերի ընթացքը:

Ըստ Նազելի Բաղդասարյանի ներկայացրած տվյալների՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց թիվը կազմում է 100 632, իսկ հաշվառված անձանց թիվը կազմում է 98 216:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ մեկնարկում է նաեւ ուսանողների աջակցության ծրագիրը: Ուսանողների կրթության ֆինանսավորման հարցի կապակցությամբ մեկնարկել է կրթաթոշակային ծրագիր. կրթաթոշակի չափը որոշվելու է՝ տվյալ մասնագիտության ուսման վարձի համեմատ:

«Կարգավորել ենք բոլոր այն դեպքերը, երբ գրանցվում են կրթական ծրագրերի, կրեդիտների տարբերություններ. այս բոլոր դեպքերի պարագայում մեր ուսումնական հաստատությունները տեղյակ են, որ պետք է կցագրեն ուսանողներին, ու սա իրականացվում է՝նաեւ առանց լիցենզիոն տեղերի սահմանափակումը հաշվի առնելու: Կրթաթոշակի չափի որոշման համար հիմք ենք վերցրել պետական բուհերում տվյալ մասնագիտությամբ ուսման միջին վարձի չափը: Սա լինելու է կրթաթոշակի առավելագույն չափը, որը պետությունը փոխհատուցելու է: Առաջին կիսամյակից հետո, երբ ուսանողները կցուցաբերեն որոշակի առաջադիմություն, կրթաթոշակի բազային չափը կավելանա բոլոր այն ուսանողների համար, որոնք կունենան բարձր առաջադիմություն: Այս կարգն արդեն շրջանառության մեջ է. կարծում եմ՝ եկող շաբաթ կմեկնարկենք ֆինանսական աջակցության այս սխեման ու, ըստ այդմ, մեր ուսանողների կրթության շարունակականությունն ապահովված կլինի նաեւ ֆինանսական տեսանկյունից»,- ասել է ԿԳՄՍ նախարարը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հավաքագրվում են նաեւ տվյալներ այն ուսանողների վերաբերյալ, որոնք կրթություն են ստանում Հայաստանի բուհերում, եւ նրանց ֆինանսավորումն իրականացվել է ԼՂ իշխանությունների կամ նրանց ընտանիքների կողմից:

«Ունենք ուսանողների երկու խումբ. ուսանողների մի խումբը ուսանող է եղել ԼՂ հաստատություններում եւ այս պահին ունի կրթության ընդհատման խնդիր: Ունենք ՀՀ բուհերում սովորող ուսանողներ, որոնց ուսման վճարումներն իրականացվել է ԼՂ կառավարության կողմից կամ իրենց ծնողների կողմից, որոնք այս պահին դժվարությամբ են վճարումներ կատարում: Առաջիկայում նաեւ այս խմբի ուսանողներին ուղղված աջակցության ծրագիր կլինի»,- եզրափակել է նախարարը:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչներին աշխատանքով ապահովման հետ կապված՝ նախարարը նշել է, որ հանրակրթության համակարգում առկա է 1790 թափուր աշխատատեղ, որից 1450-ն ուսուցչական թափուր տեղեր են: Նա ընդգծել է, որ էլեկտրոնային տարբերակով այս տեղեկատվությունը հասանելի կդառնա:

Նա տեղեկացրել է նաեւ, որ գործուղման առավելագույն ժամկետը 2 տարի է: Ուսուցիչները հնարավորություն կունենան այս ժամանակահատվածում հարմարվել, տեղավորվել իրենց մասնագիտական աշխատանքը շարունակելու եւ իրենց պլանների մասին հեռանկարային որոշումներ կայացնելու համար:

Թափուր տեղերի համալրման գործընթացը կլինի արտամրցութային: Համալրումը տեղի կունենա գործուղման տարբերակով, ինչը նշանակում է, որ ուսուցիչները կստանան իրենց բազային աշխատավարձի 30 տոկոսի չափով հավելավճար: Նախատեսվում է հոկտեմբերի 10-ից հարթակը հասանելի դարձնել, որի միջոցով ուսուցիչները կկարողանան տեսնել թափուր հաստիքները եւ դիմել աշխատանքի համար:

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱՎՈՐՎԵԼ ԵՆ ԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ «Ժողովուրդ» օրաթերթին տրամադրած տվյալների համաձայն՝ հոկտեմբերի 9-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 9082 երեխա կրթությունը շարունակում է հայաստանյան կրթական հաստատություններում:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին հոկտեմբերի 9-ին՝ «Հումանիտար կենտրոն»-ում կայացած ասուլիսին, հայտնեց Հայաստանի վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը:

«Կրթությունը Երեւանում ստանում է 2910 երեխա, Կոտայքի մարզում՝ 1561, Արարատում՝1322, Արմավիրում՝790, Լոռիում՝ 472, Գեղարքունիքում՝ 441, Արագածոտնի մարզում՝ 430, Սյունիքի մարզում՝ 390, Շիրակի մարզում՝ 342, Տավուշում՝ 258, Վայոց ձորում՝ 166»,- շեշտեց վարչապետի մամուլի քարտուղարը:

Հիշեցնենք, որ Ադրբեջանը սեպտեմբերի 19-ից Լեռնային Ղարաբաղի դեմ լայնածավալ հարձակում էր սկսել՝թիրախավորելով նաեւ քաղաքացիական ենթակառուցվածքներ, խաղաղ բնակիչներին: Զոհվել եւ վիրավորվել էին նաեւ քաղաքացիական անձինք: Սեպտեմբերի 20-ին ԼՂ իշխանություններն ընդունեցին ռուսական խաղաղապահ առաքելություն իրականացնող զորակազմի հրամանատարության առաջարկությունը՝ կրակի դադարեցման վերաբերյալ: Վերջին օրերին Լեռնային Ղարաբաղից ՀՀ են տեղափոխվում բռնի տեղահանված քաղաքացիներ:

ՆՈՐ ԱՐՑԱԽՑԻՆԵՐ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ընտանիքներում 38 ծնունդ է գրանցվել. 14-ը Երեւանում է, 24-ը՝ՀՀ մարզերում:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին հոկտեմբերի 9-ին՝ «Հումանիտար կենտրոն»-ում կայացած ասուլիսին, հայտնեց Հայաստանի վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը:

Անդրադառնալով Հայաստանի տարբեր բուժհաստատություններում առողջությունը վերականգնող անձանց, որոնք բռնի տեղահանվել են Լեռնային Ղարաբաղից, նա ընդգծեց՝ հոկտեմբերի 9-ի դրությամբ նրանց թիվը 278 է:

«95 բուժառուի վիճակը գնահատվում է ծանր, 11-ինը՝ծայրահեղ ծանր: Միջին ծանրության հիվանդներ կան անչափահասների շրջանում. 7 երեխա շարունակում է իր բուժումը»,-տեղեկացրեց Բաղդասարյանը:

Նա հիշեցրեց՝ շարունակվում է կցագրումը առողջապահության առաջնային հաստատություններում՝ ամբուլատորիաներում եւ պոլիկլինիկաներում: «Հոկտեմբերի 9-ի դրությամբ այդ թիվը կազմում է 16 հազար 448. մարդկանց գրեթե 16, 5 տոկոսն արդեն իսկ հաշվառվել է պոլիկլինիկաներում եւ ամբուլատորիաներում»,-շեշտեց Բաղդասարյանն ու հիշեցրեց՝ առողջապահության հետ կապված բոլոր խնդիրները Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մարդիկ լուծում են պետական պատվերի շրջանակներում:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 56 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 78-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1) ԱՃՈՒՐԴԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2023թ. հոկտեմբերի 26-ին, ժամը 12:00-ին Սեւակ Գալստյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի «Արդշինբանկ» ՓԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով երրորդ անձ Հարութ Գեւորգյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-1. ՀՀ ք. Արագածոտնի մարզ, գ. Ձորագլխում գտնվող 381.0 քմ մակերեսով արտադրական նշանակության հողամասը:

Մեկնարկային գինը սահմանվում է 392,850 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով (բայց ոչ ավել 200,000 ՀՀ դրամից) մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Սեւակ Գալստյանի սնանկության հաշվին՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի «Նոր Արեշ» մասնաճյուղ 1150004558048023 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան /ք.Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2) ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2023թ. հոկտեմբերի 26-ին, ժամը 12:30-ին պարտապան Ա/Ձ Վարդան Ավետիսյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց պող. 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի սեփականության իրավունքով Վարդան Ավետիսյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով, բաց դասական եղանակով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-1. ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիսում գտնվող ավտոտնակը:

Մեկնարկային գինը սահմանվում է 616,877 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետակա գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.

Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Վարդան Ավետիսյանի սնանկության հաշվին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղ 2472303816560000 հաշվեհամարին՝ մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ՆԱՎԹԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՕՊԵԿ-ն իր տարեկան կանխատեսման մեջ բարձրացրել է նավթի համաշխարհային պահանջարկի միջնաժամկետ եւ երկարաժամկետ կանխատեսումները՝ նշելով, որ այդ պահանջարկը բավարարելու համար անհրաժեշտ է 14 տրիլիոն դոլարի ներդրում. հաղորդում է Reuters-ը:

Նավթ արտահանող երկրների կազմակերպության կարծիքը 2023 թվականի նավթի համաշխարհային կանխատեսման մեջ, որը հրապարակվել է երկուշաբթի օրը, հակասում է այլ կանխատեսողներին, այդ թվում՝ Միջազգային էներգետիկ գործակալությանը, որոնք ասում են, որ պահանջարկը կարող է հասնել գագաթնակետին այս տասնամյակում:

«Վերջին իրադարձությունները ՕՊԵԿ-ի թիմին ստիպել են վերանայել, թե յուրաքանչյուր էներգիայի աղբյուր ինչ կարող է մատուցել՝ շեշտը դնելով պրագմատիկ եւ իրատեսական տարբերակների եւ լուծումների վրա», - զեկույցի առաջաբանում գրել է ՕՊԵԿ-ի գլխավոր քարտուղար Հայթամ Ալ-Գայսը:

«Նավթային նոր նախագծերում ներդրումները դադարեցնելու կոչերը սխալ են եւ կարող են հանգեցնել էներգետիկ եւ տնտեսական քաոսի», - ավելացրել է նա՝ գնահատելով նավթի ոլորտում անհրաժեշտ ներդրումները մինչեւ 2045 թվականը 14 տրիլիոն դոլար՝ անցյալ տարվա 12,1 տրիլիոն դոլար գնահատականի դիմաց:

ՕՊԵԿ-ն ակնկալում է, որ մինչեւ 2045 թվականը նավթի համաշխարհային պահանջարկը կկազմի օրական 116 միլիոն բարել, ինչը մոտ 6 միլիոն բարելով ավելին է, քան սպասվում էր անցյալ տարվա զեկույցում, ընդ որում՝ աճը գլխավորում են Չինաստանը, Հնդկաստանը եւ ասիական այլ երկրներ, ինչպես նաեւ Աֆրիկան եւ Մերձավոր Արեւելքը:

ՄԷԳ-ի գործադիր տնօրեն Ֆաթիհ Բիրոլն անցյալ շաբաթ ասել է, որ ածխի, նավթի եւ բնական գազի համաշխարհային սպառումը կարող է հասնել գագաթնակետին մինչեւ 2030 թվականը:

ՕՊԵԿ-ը նաեւ բարձրացրել է պահանջարկի իր կանխատեսումները մինչեւ 2028 թվականը միջնաժամկետ կտրվածքով՝ վկայակոչելով այս տարվա կայուն պահանջարկը՝ չնայած տնտեսական հակահարվածներին, ինչպիսիք են տոկոսադրույքների բարձրացումը եւ ավտոմոբիլային տրանսպորտի աճը:

«Չնայած այս կանխատեսմանը՝ 2023 թվականին նավթի պահանջարկը կայուն է», - ասվում է զեկույցում:

ՕՊԵԿ-ի կանխատեսումների համաձայն՝ 2028 թվականին համաշխարհային պահանջարկը կկազմի օրական 110,2 միլիոն բարել՝ 2023 թվականին օրական 102 միլիոն բարելի դիմաց: Կանխատեսվում է, որ 2027 թվականին նավթի սպառումը կկազմի օրական 109 միլիոն բարել՝ 2022 թվականին կանխատեսվող օրական 106,9 միլիոն բարելի դիմաց:

Հավելենք, որ, ՕՊԵԿ-ի կանխատեսմամբ, մինչեւ 2045 թվականը աշխարհի ճանապարհներին կլինի 2,6 միլիարդ ավտոմեքենա՝ միլիարդով ավելի, քան 2022 թվականին: Զեկույցում նշվում է, որ դրանց ավելի քան 72%-ը հագեցած կլինի ներքին այրման շարժիչներով՝ չնայած այն հանգամանքին, որ էլեկտրական մեքենաներն ամենաարագ զարգացող հատվածն են:

ՕՊԵԿ-ը եւ նրա դաշնակիցները, որոնք հայտնի են որպես ՕՊԵԿ+, կրկին կրճատում են մատակարարումները՝ շուկային աջակցելու համար: Զեկույցում ասվում է, որ ՕՊԵԿ-ի ընդհանուր մասնաբաժինը նավթի շուկայում 2045 թվականին կաճի մինչեւ 40% 2022 թվականի 34%-ից, քանի որ ոչ ՕՊԵԿ-ի արդյունահանումը սկսում է նվազել 2030-ականների սկզբից:

ՏԵՂԵԿԱՏՐԻՆ

ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ կառավարության՝ 2023 թվականի «Հայաստանի Հանրապետությունում «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2204, 2205, 2206 00, 2207 եւ 2208 ծածկագրերին դասվող ապրանքների՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակում նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոնները հաստատելու մասին» թիվ 1699-Ն որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի հոկտեմբերի 15-ից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 2204, 2205, 2206 00, 2207 եւ 2208 ծածկագրերին դասվող, ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա ալկոհոլային ապրանքների դրոշմավորումը կիրականացվի՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից 2021 թվականի մարտի 5-ին հաստատված Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի հիմնական տեխնոլոգիական կազմակերպչական մոդելի համաձայն: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ՊԵԿ-ից:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորմանը զուգահեռ շարունակվելու է նաեւ ակցիզային դրոշմավորումը:

Միաժամանակ, կոմիտեն հիշեցնում է, որ ՀԴՄ կիրառողները, հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում, ՀԴՄ-ի միջոցով կամ ՀԴՄ-ին միացված ծրագրային եւ (կամ) տեխնիկական միջոցներով պետք է ապահովվեն այդ հսկիչ (նույնականացման) նշանների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը հարկային մարմնի միասնական շտեմարան:

Հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում այդ ապրանքների վրա առկա հսկիչ (նույնականացման) նշանների վերաբերյալ տեղեկատվությունը հարկային մարմնի միասնական շտեմարան չփոխանցելը դիտվում է ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՎԵՑ

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցներն Արմավիրի մարզում գործող «Նաիրի-16» ՓԲԸ-ում իրականացրած ստուգման արդյունքում պարզել են, որ ընկերությունը գործունեություն է իրականացնում առանց անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտային օդ արտանետման թույլտվության: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ԲԸՏՄ-ից:

Տեսչական մարմնի կողմից կասեցվել է ընկերությանը պատկանող բետոնի արտադրամասի բետոնահանգույցի եւ կից գործող չորանոցի հետագա շահագործումը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՀԵՆՑ ԱՅՍՕՐՎԱ ՀԱՅԸ» ՏՐԱԳԻԿՈՄԵԴԻԱՆ

Հոկտեմբերի 5-ին «Մոսկվա» կինոթատրոնի Կարմիր դահլիճում Վահրամ Սահակյանը ներկայացրեց ֆիլմային հատվածներով համեմված իր նորագույն «Հենց այսօրվա հայը» տրագիկոմեդիան:

Ներկայացման կազմակերպիչները հայտնում են, որ եթե արդեն դիտել եք հոկտեմբերի «Հենց այսօրվա հայ»-ին, ապա չմոռանանք, որ հենց այսօրվա հայը կատարելագործվում է, եւ նոյեմբերի 11-ին կայանալիք ներկայացման մեջ ավելանում են հենց նոյեմբեր ամսվա հային բնորոշ նոր գծեր: Ներկայացումը հիմնականում չի փոխվում, բայց ավելանում են նոր մանրապատումներ, նոր մենախոսություններ եւ նոր ֆիլմային հատվածներ:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացման մանրամասների մասին զրուցել է ժամանակակից գրող, բանաստեղծ, թատերագիր, դերասան Վահրամ Սահակյանի հետ.

-Պարոն Սահակյան, Դուք անընդհատ նշում էիք, որ ցանկանում եք, որպեսզի մտածող հայը գա Ձեր ներկայացմանը, նրանք, որոնք չեն կարողանում նստել իրենց տեղերում: Ովքե՞ր եկան ներկայացմանը: Դուք գո՞հ եք ներկայացումից: Ձեր սպասելիքներն արդարացա՞ն:

-Ինչպես եւ սպասելի էր, ներկայացմանը եկել էին երեկվա, այսօրվա եւ վաղվա հայերը, այլ ոչ հենց այսօրվա հայերը: Հենց այսօրվա հայը, ում ես ներկայացնում եմ իր տարատեսակ նողկալի դրսեւորումներով, ստորության մարմնավորումն է, դա անարգանք է երկրի, պետության եւ հայրենիքի համար:

-Մարդիկ իրենց հույզերով, գնահատականներով կիսվե՞լ են Ձեզ հետ, ի՞նչն է նրանց ամենաշատը դուր եկել:

-Մարդիկ իրոք հուզվել են, մանավանդ՝ ներկայացման վերջում ցուցադրված ֆիլմային մասից, որտեղ ավելի հստակ է ցուցադրվում այսօրվա եւ հենց այսօրվա հայի միջեւ եղած անդունդը:

-«Ժողովուրդ» օրաթերթը խոսել է հանդիսատեսի հետ. նրանք ասում են, որ, ընդհանուր առմամբ, հրաշալի էր ու շատ տեղերում «կպնում» էր մարդկանց հոգուն: Այն ամենը, ինչի մասին շատերը լռում էին, Դուք խոսել եք, սակայն մի քանի բանի չեք անդրադարձել, օրինակ՝հայի այն տեսակին, որը քաղաքականությամբ չի զբաղվում: Երկիր են հանձնում, ողբերգություն է տեղի ունենում, ու այս ֆոնին շատ-շատերը պարզապես ասում են, որ «քաղաքականությամբ չեն զբաղվում»: Ինչո՞ւ չեք անդրադարձել այս տեսակին:

-Ճիշտն ասած, կոնկրետ «ես քաղաքականությամբ չեմ զբաղվում» հային ես անդրադարձել եմ իմ նախորդ բոլոր ներկայացումներում, մանավանդ՝այս տարվա փետրվարին ներկայացված «Պատվախաղ 2» տրագիոմեդիայում: Ուզում եմ նշել, որ հենց այսօրվա հայը շարունակ փոխվում է եւ կատարելագործում, եւ կոնկրետ հիմա՝ 2023 թվականի հոկտեմբերին, «ես քաղաքականությամբ չեմ զբաղվում» արտահայտությունն արդեն արդիական չէ: Ավելին ասեմ՝ հոկտեմբերին ներկայացված հենց այդօրվա հայն ուրիշ է, նոյեմբերինն ուրիշ է լինելու, իսկ դեկտեմբերինն ընդհանրապես երեւի վիժվածքագույն գարշանք լինի: Նրանք ծնում են իրենց նոր արտահայտությունները:

Զրուցեց ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԸ

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ԹԱՆԿՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Սերժ Թանկյանը դատապարտել է ՀԱՄԱՍ-ի կողմից խաղաղ իսրայելցիների նկատմամբ դաժան վերաբերմունքը, բայց նաեւ հիշեցրել, որ ժամանակին Իսրայելը աջակցում էր Ադրբեջանին, որը նույն գործողությունը կատարում էր Արցախում ապրող հայերի նկատմամբ:

X-ի իր էջում Թանկյանը գրել է. «Խաղաղ բնակիչների վրա հարձակումը, նրանց առեւանգումն ու սպանելը պատերազմական հանցագործություններ են՝ անկախ նրանից, թե ով է դա անում: Այն, ինչ ես տեսա Իսրայելի վրա ՀԱՄԱՍ-ի հարձակումից, սարսափելի է: Անցյալում մենք տեսել ենք նաեւ Իսրայելի կողմից Պաղեստինի քաղաքացիների անկանոն սպանություններ:

Հավելենք նաեւ, որ մոտ երկու շաբաթ առաջ Իսրայելի կողմից զինված Ադրբեջանը նույնն արել է Արցախում ապրող հայերի նկատմամբ՝ ստիպելով նրանց փախչել իրենց՝3000 տարվա հայրենիքից:

Այն, ինչ մենք ստացանք այն ժամանակ Իսրայելի կառավարությունից, կեղծ հավասարություն էր՝ երկու կողմերին զսպվածության կոչով»:

Աշխարհահռչակ հայ երաժիշտը հավելել է. «Մի բռնակալի կողմից էթնիկ զտման հաջողությունը խրախուսեց մյուսներին: Ես կանգնած եմ ինչպես պաղեստինցիների, այնպես էլ իսրայելցիների կողքին, որոնք ցանկանում են խաղաղություն»:

Հիշեցնենք, որ ամերիկահայ ռոք երաժիշտ, երգահան, բանաստեղծ եւ քաղաքական ակտիվիստ Սերժ Թանկյանը սոցիալական իր էջերում բազմիցս անդրադարձել է Արցախում տեղի ունեցող իրավիճակին: Վերջերս Թանկյանը հրապարակել էր վիդեոուղերձ՝ կից գրելով. «ԽՆԴՐՈՒՄ ԵՄ ՏԱՐԱԾԵԼ

Ադրբեջանն է մեղավոր ցեղասպանության համար

Թուրքիան մեղավոր է ցեղասպանության համար

Ռուսաստանն է մեղավոր ցեղասպանության համար

Պակիստանը մեղսակից է ցեղասպանությանը

Իսրայելը մեղսակից է ցեղասպանությանը

ԵՄ-ն մեղսակից է ցեղասպանությանը

ԱՄՆ-ն մեղսակից է ցեղասպանությանը»:

ԴԵՎՈՅԱՆԸ ԱՆԿԵՂԾԱՑԵԼ Է

Սոֆի Դեւոյան կրտսերը ինստագրամյան իր էջում շարունակում է նոր հոլովակներ ու սթորիներ հրապարակել: Սոֆին կիսվել է իր լուսանկարով՝ կից գրելով. «Անկեղծ կլինեմ ու կասեմ, որ էս շրջանում բարդ է ինձ տրվում նույնիսկ սրճարան գնալը ... Բայց նաեւ գիտակցում եմ, որ պիտի շարունակենք ապրել...Անչափ երջանիկ եմ, որ նոր ընտանիքներ են ստեղծվում՝ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ»:

Ավելի ուշ Դեւոյանը սթորիով է կիսվել ընկերներից մեկի հարսանյաց արարողությունից:

«Շատ երջանիկ լինեք, սիրո՛ւն ջան»,- գրել է նա:

ՍՊՈՐՏ

ՌԵԿՈՐԴԸ ԿՐԿՆԵՑ

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» 34-ամյա հարձակվող Թոմաս Մյուլերը կրկնել է «Բավարիայի» 37-ամյա դարպասապահ Մանուել Նոյերի ռեկորդը Բունդեսլիգայում տարած հաղթանակների քանակով՝322:

Գերմանիայի առաջնության 7-րդ տուրում «Բավարիան» 3:0 հաշվով պարտության էր մատնել «Ֆրայբուրգին»:

Մանուել Նոյերը շարունակում է վերականգնվել ոտքի կոտրվածքից հետո: Նա խաղադաշտ դուրս չի եկել 2022թ. դեկտեմբերի 1-ից:

ՉԱՎԻԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» իսպանացի գլխավոր մարզիչ Չավին մեկնաբանել է 2:2 հաշվով ոչ-ոքի արդյունքը «Գրանադայի» հետ Լա Լիգայի 9-րդ տուրի խաղում:

«Կարծում եմ՝ մենք գերիշխում էինք հանդիպման ամբողջ ընթացքում: Մենք ունեինք բազմաթիվ պահեր եւ արժանի էինք հաղթանակի, բայց մեր սխալների հետեւանքով չհաղթեցինք: Մենք ասում էինք, որ «Գրանադան» վտանգավոր է:

Լավ տպավորություն է թողնում մեր ֆուտբոլը, բայց արդյունքը չի գոհացնում: Այսպիսի խաղում 1 միավորը քիչ է»,- Չավիի խոսքը մեջբերում է AS-ը:

«Բարսելոնան» 21 միավորով երրորդն է, «Գրանադան» նախավերջինն է՝6 միավոր: Առաջատար «Ռեալն» ունի 24 միավոր: Երկրորդ տեղում գտնվող «Ժիրոնան» ունի 22 միավոր:

ՀԱՄԱՏԵՂ «ԵՎՐՈ–2032»

Ֆուտբոլային Եվրո-2032-ը համատեղ կանցկացնեն Իտալիան ու Թուրքիան: Ռուսաստանի հայտը չի ընդունվել, եւ այս երկրները քվեարկությունում մրցակից չունեն:

Պաշտոնական հայտարարությունը կլինի հոկտեմբերի 10-ին ՈՒԵՖԱ-ի խորհրդի նիստում. հաղորդում է Goal.com-ը:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ «Եվրո-2028»-ը կանցկացվի Մեծ Բրիտանիայում եւ Իռլանդիայում համատեղ: Թուրքիան հրաժարվել էր 2028թ. Եվրոպայի առաջնությունն անցկացնելու հավակնությունից:

ՊԱՇՏՈՆԻՑ ՀԵՌԱՑՐԵՑ

«Սեւիլիան» գլխավոր մարզչի պաշտոնից հեռացրեց 62-ամյա իսպանացի Խոսե Լուիս Մենդիլիբարին. հաղորդում է իսպանական ակումբի մամուլի ծառայությունը: Մենդիլիբարը 2023թ. մարտին էր գլխավորել «Սեւիլիան», որը նրա օրոք նվաճեց Եվրոպայի լիգայի գավաթը: Ակումբը շնորհակալություն է հայտնել Մենդիլիբարին ակումբային պատմության մեջ մտնելու համար՝ Եվրոպայի լիգայի 7-րդ տիտղոսը նվաճելու շնորհիվ:

Ընթացիկ մրցաշրջանում «Սեւիլիան» 2 հաղթանակ է տարել, 5 խաղ ավարտել է ոչ-ոքի, կրել 4 պարտություն:

● *Հոկտեմբերի 11-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Վերոնիկան որոշում է մեռնել» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝4000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ կուսակցություն բացելու համար որն է առաջին քայլը: Խնդրում եմ ներկայացնել կարգը:

Արտակ Մնացականյան (42 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Կուսակցությունը ՀՀ քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակը հանրաքվեներին, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու եւ հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձեւերով ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորմանն ու արտահայտմանը նպաստելն է: Կուսակցությունը ձեւավորվում է ՀՀ քաղաքացիների նախաձեռնությամբ՝ հիմնադիր համագումարի որոշմամբ: Հիմնադիր համագումարը իրավազոր է, եթե դրան մասնակցում է առնվազն 100 հիմնադիր: Համագումարը կուսակցություն ստեղծելու առաջին քայլն է. անհրաժեշտ է կուսակցության պետական գրանցում: Կուսակցությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում ոչ առեւտրային իրավաբանական անձի կարգավիճակ: Արգելվում է այն կուսակցությունների ստեղծումը կամ գործունեությունը, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական նախադպրոցական, դպրոցական եւ այլ ուսումնական հաստատություններում, պետական այլ կազմակերպություններում կուսակցությունների ստորաբաժանումների տեղակայումը:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Արգելվում է ՀՀ տարածքում օտարերկրյա կուսակցությունների կամ դրանց ստորաբաժանումների, ինչպես նաեւ հիմնարկների ստեղծումը կամ գործունեությունը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է հաշվարկվում աշխատանքային ստաժը: Ուզում եմ ծանոթանալ հաշվարկման կարգին:

Ամալյա Մխոյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Մխոյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ աշխատանքային ստաժում հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի ընդունելուց մինչեւ ազատելու օրն ընկած ժամանակահատվածները, այլ գործունեության ժամանակահատվածները, ինչպես նաեւ զինվորական ծառայության ժամանակահատվածները: Ստաժում հաշվարկվում են յուրաքանչյուր ժամանակահատվածի տարին, ամիսը, օրը, այնուհետեւ գումարվում, ընդ որում՝ յուրաքանչյուր 30 օրը հաշվառվում է որպես մեկ լրիվ ամիս, իսկ յուրաքանչյուր 12 ամիսը՝ մեկ լրիվ տարի: Կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչեւ 6 ամսվա (180 օրվա) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժի առկայության դեպքում, իսկ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելիս օրենքի 12-րդ հոդվածով սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում է նաեւ ծնողներից մեկի՝ հաշմանդամ երեխային մինչեւ նրա 18 տարին լրանալը, կամ խնամակալ ճանաչված անձի՝ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը՝ տասը տարուց ոչ ավելի:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում



Երեկ՝ հոկտեմբերի 9-ին, Հակակոռուպցիոն դատարանում ընթանում էր Արմեն Աշոտյանի դատական նիստը: Ոստիկանական մեծ ուժեր էին կուտակվել Հակակոռուպցիոն դատարանում, որոնք եկել էին Արմեն Աշոտյանի դատի ժամանակ դատարանում հնարավոր անկանոն վիճակը կարգավորելու համար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________
Ազգանուն՝ ______________
Առաքման հասցե՝ ______________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	- 1 + 2	+10 + 16
Կոտայքի լեռներ	+ 1 + 4	+10 + 13
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 8	+15 + 17
Գեղարքունիք	+ 2 + 3	+10 + 14
Լոռի	+ 0 + 5	+9 + 13
Տավուշ	+ 3 + 7	+12 + 15
Արագածոտնի լեռներ	+1 + 3	+ 9 + 11
Արագածոտնի նախալեռներ	+ 6 + 9	+ 15 + 19
Արարատ	+ 8 + 10	+ 19 + 22
Արմավիր	+ 6 + 8	+ 18 + 20
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 4	+ 10 + 12
Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 10	+ 18 + 21
Սյունիքի հովիտներ	+ 9 + 12	+ 18 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8	+ 11 + 13
ԼՂՀ	+ 9 + 12	+ 19 + 24
Երեւան	+ 9 + 11	+ 18 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **9.10.2023**

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*